

**ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՁԵՎԱԽՄԱՍՏԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

ՄԱՐԻԱՆԱ ԲԱԴԻԿՅԱՆ

Հոգվածում ուսումնասիրվում են անձի հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորների ձևախմաստային տեսակները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ի տարբերություն սովորական բառերի, որոնք մեծ մասամբ բազմիմաստ են, դարձվածքները հիմնականում մենիմաստ են և հատկանշվում են մենիմաստությամբ: Դա պայմանավորվում է դարձվածքների սկզբնատիպ բառակապակցությունների վերախմաստավորման հնարավորությունների սահմանափակությամբ: Նախ՝ այս կամ այն բառակապակցությունը վերախմաստավորելով ու գործածելով այլաբերական-փոխաբերական նշանակությամբ՝ ժողովուրդը ձգտում է նրանով առհասարակ մեկ հասկացություն կամ իրողություն արտահայտել: Դարձվածքի ամեն մի իմաստ ստեղծվում ու զարգանում է ինքնուրույնաբար, այսինքն՝ մեկ իմաստից ոչ թե մի այլ իմաստ, այլ մեծ մասամբ նույն հիմքից տարբեր զուգորդումներով տարբեր իմաստներ են ծնվում¹:

Սովորաբար բառերի պես դարձվածքները ևս լինում են մենիմաստ և բազմիմաստ²:

Մինևույն առարկան, վերաբերմունքը, երևույթը բնութագրելու համար նույն ժողովրդի տարբեր հատվածներում կամ տարբեր ժողովուրդների մեջ ստեղծվել և ստեղծվում են նույնիմաստ դարձվածքներ. այդ պատճառով էլ առաջանում է դարձվածքների բազմիմաստություն ու հոմանիշություն³:

Հայերենի, ռուսերենի և անգլերենի բազմիմաստ դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում բազմիմաստության ծավալն ու բովանդակությունը նույնը չեն: Բազմիմաստ դարձվածքներով ամենահարուստը

¹ Жуков В. П., Русская фразеология, М., Высшая школа, 1986, стр. 310. Jukov V. P., Russkaya frazeologiya, M., VSH., 1986, str. 202.

² Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 333: Margaryan A., Jamanakakits hayots lezu, Er., 1990, ej 333:

³ Բադիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, ԵՀՀ, Երևան, 2000, էջ 63: Badikyan Kh., Dartsvatsain notchabanutun, EHH, Y., 2000 ej 63:

հայերենն է: Բազմիմաստությունն ավելի հաճախ հատուկ է այն դարձվածքներին, որոնք իրենց կառուցվածքով համապատասխանում են բառակապակցությանը: Դրանց շարքում կան թե՛ անվանական (գոյական, ածական, մակբայական), թե՛ բայական կառույցներ:

Բերենք մի քանի նման դարձվածք:

Բերանը բաց – 1. Հիացած, զմայլված. 2. Զարմացած, ապշած:

Խելըը գլխին – 1. Խելըը, հասկացող, խելացի, բանիմաց. 2. Ուշադիր, զգոն, սթափ, ուշիմ. 3. Կարգին, հարմար:

Ձեռքից գնալ – 1. Փչանալ, ոչնչանալ, կորչել. 2. Մաշվել, հյուծվել:

Дырявая голова– 1. Շատ վատ հիշողություն ունեցող անձ. 2. Մոռացկոտ անձ:

Как без рук–1. Լրիվ անօգնական. 2. Անկարող, անճարակ:

Светлая голова– 1. Շատ խելոք, մտածող, տրամաբանող. 2. Խելոք մարդ:

С головой – 1. Շատ խելոք, ընդունակ. 2. Գիտակցված, մտածված:

A cool head (բառացի՝ սառը գլուխ) – 1. Պաղարյուն, սառնարյուն, հանգիստ. 2. Պաղարյունություն, սառնարյունություն, հանգստություն:

A level head (բառացի՝ մակարդակով գլուխ) – 1. Պաղարյուն, սառնարյուն, հավասարակշռված. 2. Պաղարյունություն, սառնասրտություն:

As black as ink – 1. Շատ մութ, խավար. 2. Կեղտոտ. 3. Մոայլ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի լեզվի որոշ բազմիմաստ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտվող այս կամ այն լեզուներում: Այդ համարժեքները կարող են լինել լրիվ և մասնակի: Լրիվ համարժեքները, որոնք խիստ սահմանափակ են, համընկնում են իրենց բոլոր իմաստներով: Մասնակի են այն համարժեքները, որ համընկնում են ոչ բոլոր իմաստներով, օրինակ՝ **խելըը գլխին** – 1. Խելոք, հասկացող, խելացի, բանիմաց. 2. Ուշադիր, զգոն, սթափ, ուշիմ. 3. Կարգին, հարմար, **с головой**– 1. Շատ խելոք, ընդունակ. 2. Գիտակցված, մտածված:

Դարձվածքների բազմիմաստության երևույթի հետ կապված է նաև դարձվածքային համանունությունը⁴:

Համանուն դարձվածքներ

Համանուն են կոչվում այն դարձվածքները, որոնք համանուն բառերի

⁴ Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, «Լույս» հր., Երևան, 1980, էջ 498: Jahukyan G., Aghayan E., Arakelyan V., Hayots lezu, I mas, A prak «luys» hr., Yerevan 1980, ej 498:

պես արտաքին կազմով՝ ձևով նույնն են, բայց տարբեր իմաստ են արտահայտում⁵:

Համանունության երևույթն առկա է ոչ միայն առանձին բառերի ոլորտում, այլ նաև դարձվածքային միավորների: Դարձվածքային համանունությունը խիստ սահմանափակ է և տարածվում է սահմանափակ թվով դարձվածքների վրա: Նշենք նաև, որ ժամանակակից բառարաններում համանուն դարձվածքները տարանջատված չեն, նրանք սովորաբար դիտարկվում են որպես բազմիմաստ դարձվածքներ: Դարձվածքների բազմիմաստությունը երբեմն կարող է հանգեցնել համանունության: Բերենք մի քանի օրինակ երեք լեզուներում:

Աստծո կրակ (շատ ճարպիկ)– **Աստծո կրակ** (փորձանք, աղետ)

աչքը բաց (աչքաբաց, ճարպիկ, ուշիմ) – **աչքը բաց** (արթուն)

աչքը փակ (միամիտ, կյանքի փորձ չունեցող) – **աչքը փակ** (առանց աչքերը բացելու)

արյունը փաք (գրավիչ, համակրելի) – **արյունը փաք** (ոյուրագրգիռ, տաքարյուն)

բերանը կապած (անգրագետ) – **բերանը կապած** (բերանը հատուկ շորով կապած)

չոր գլուխ (անհնազանդ, չլսող) – **չոր գլուխ** (մեն –մենակ, ընտանիք, երեխաներ չունեցող)

ծանր լեզու (դանդաղախոս, դժվարախոս (մարդ) – **ծանր լեզու**

(դժվարընթեռնելի (լեզու)

как бык (համառ) – **как бык** (դժվարությամբ) – **как бык** (շատ բարձր, զայրացած) – **как бык** (շատ առողջ, ուժեղ)

с бородой (հին, հայտնի պատմություն) – **с бородой** (հարուստ մարդ)

с иголочки (նոր) – **с иголки** (աղքատ)

стиральная доска (նիհար կին) – **стиральная доска** (փոսերով ճանապարհ)

тяжелая артиллерия (դանդաղաշարժ մարդիկ) – **тяжелая артиллерия** (ծայրահեղ դեպքում օգտագործվող հուսալի միջոց՝ նպատակին հասնելու համար)

a cog in a machine (ոչ կարևոր անձ) – **a cog in a machine** (մեքենայի պտուտակ)

⁵ **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, էջ 333: Margaryan A. S., Jamanakits hayots lezu, ej 337:

be on sb's back (մեկի հանդեպ բժախնդիր լինել) - **be on sb's back** (մեկի խնամքի տակ լինել)

old woman (երկչոտ անձ) – **old woman** (ծեր կին)

Դարձվածքային հոմանիշներ

Դարձվածքային հոմանիշներ ասելով հասկանում ենք այն միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ⁶, հարաբերակից են նույն խոսքի մասին և մեծ մասամբ օժտված են շարահյուսական նույն կապակցելիությամբ: Դարձվածքային հոմանիշները նույն քերականական հատկանիշներով են օժտված, և նրանց բաղադրիչները փոխադարձաբար փոխարինելի չեն: Դիտարկվող լեզուներում հոմանիշ դարձվածքները կարող են միավորվել հոմանշային բույների, խմբերի և շարքերի մեջ⁷: Առաջինները պարունակում են այնպիսի դարձվածքներ, որ ունեն ընդհանուր բաղադրիչ՝ **սիրտը փափուկ – սիրտը բարակ** (նրբազգաց), **have a good head on one's shoulders – have on'e head screwed on right** (խելացի լինել), երկրորդները՝ դարձվածքներ, որ իրենց կազմում չունեն ո՛չ հոմանիշ, ո՛չ ընդհանուր բաղադրիչներ՝ **երեսը պարռած – մազը կորած** (անամոթ), **белая горячка – зеленый змий** (արբեցատենդ), **down at heel – out at elbow** (վատ, աղքատիկ հագնված), երրորդները, որ պարունակում են թե՛ հոմանիշ և թե՛ ոչ հոմանիշ բաղադրիչներ՝ **дурья башка – дубовая голова** (հիմար մարդ), **the apple of on'e eye – the desire / light of sb's eyes** (մեկի աչքի լույսը):

Դարձվածքների հոմանշությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հոմանշային շարքերի մեջ մտնում են նույն կառուցվածքն ունեցող դարձվածքները⁸:

Նախադասության կառուցվածք ունեցող դարձվածքային միավորները կազմում են առանձին հոմանշային շարքեր, ինչպես օրինակ՝ **բերանում տաք ջուր չի մնում – բերանում թան չի մնում – բերանում լոբի/ սիսեռ / ոսպ չի մնա / չի թրջվի** (բաց բերան է), **փորում այբի կտոր չկա – գլուխը այբի կտոր չկա** (անգրագետ է):

⁶ Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, էջ 495: Jahukyan G., Aghayan E., Arakelyan V., Hayots lezu, I mas, A prak, ej 495:

⁷ Кунин А.В. Курс фразеологии английского языка, М., 1986, стр. 110. Kunin A. V., Kurs frazeologii angliskogo yazika. M., 1986, s. 110.

⁸ Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, էջ 495: Jahukyan G., Aghayan E., Arakelyan V., Hayots lezu, I mas, A prak, ej 495:

Հասկացություն արտահայտող դարձվածքները հոմանշային շարքեր են կազմում իրար հետ: Ընդ որում իրենց բաղադրիչների իմաստից և բնույթից կախված՝ հոմանիշ դարձվածքները լինում են նույնանիշ կամ համանիշ: Նույնանիշ են այն հոմանիշ դարձվածքները, որոնք արտահայտում են նույն իմաստը և կարող են հեշտությամբ փոխարինել իրար⁹ **ձեռքը ծուռ – ձեռքից քաշ – աչքի սուրմա թոցնող – աչքից մազ հանող** (ճարպիկ գող), **дурья голова – дубовая голова** (հիմար), **большое сердце – доброе сердце** (բարի, բարեսիրտ), **умная голова – ученая голова** (խելացի անձ), **be soft in the head – be touched in the head** (հիմար, անխելք), **be out of one's head – be off one's head** (խելացնոր լինել):

Հարկ է նշել, որ հայերենն առանձնապես հարուստ է համանիշ դարձվածքներով: Համանիշ են այն դարձվածքները, որոնք արտահայտում են ոչ թե ամբողջությամբ նույն, այլ մոտ իմաստ, օրինակ՝ **մարմանդ գեպ – դարմանի փակի ջուր – սափանայի հեպ սոխ ու սխորոռ ուրող** (խարդախ, նենգ, խաբեբա), **ձեռքը փակ – ձեռքը պինդ** (ժլատ), **глаз набит – рука набита** (մեկը փորձառու է ինչ – որ բանում), **աչքը ծակ – ձեռքը փակ – օձ խուզող – ձեռքը գոց** (ազահ, անկուշտ, ժլատ), **կողը հասար – ճակատը պինդ** (համառ), **գլուխը դափարկ – գլուխը հասար – գլուխը դդում** (հիմար անձ), **дубовая голова- дырявая голова – мозги не варят – без головы** (հիմար), **бу́нная голова – бедовая голова – забубенная голова** (քաջ, խիզախ), **down in the mouth –broken – hearted** (հուսահատ):

Դիտարկվող լեզուներում որոշ հոմանշային շարքեր կարող են ունենալ իրենց համարժեք շարքերը մյուս լեզուներում, ինչպես օրինակ՝ **արյունը կապույտ – արյունը կարմիր – голубая кровь – белая кость – good blood – high blood – blue blood, գլուխը դդում – գլուխը դատարկ – գլուխը մի կոպեկի խելք չկա- գլուխը հաստ – еловая голова – мякинная голова – голова садовая- голова дубовая – голова два уха – a wooden head – a pumpkin head –a mutton head –a thick-headed thing:**

Հականիշ դարձվածքներ

Հականիշ են կոչվում ձևով տարբեր՝ հակադիր իմաստ արտահայտող դարձվածքները: Դրանք խոսքին հաղորդում են մեծ պատկերավորություն ու արտահայտչականություն:

Հականիշ դարձվածքներ կարող են կազմվել ընդհանրապես հականիշ բաղադրիչների միջոցով և իրենց հականշությամբ հիմնվում են հենց այդ

⁹ Նույն տեղում, էջ 496:

բաղադրիչների արտահայտած հակադրական իմաստների վրա, ինչպես օրինակ՝ **երեսը սև** (խայտառակված) - **երեսը սպիտակ** (պարզերես), **աչքի փուշ**, **աչքի գրող** (ատելի), **գլուխը լիքը** (խելոք, խելացի) - **գլուխը դափարկ** (հիմար), **սիրտը փափուկ** (քնքուշ) - **սիրտը կարծր** (դաժան), **ծեղը բաց** (առատաձեռն) - **ծեղը փակ** (ժլատ), **черная кость** (ոչ ազնվական ծագումով անձ) - **белая кость** (ազնվական ծագումով անձ), **умная голова** (խելոք, խելացի անձ) - **дурья голова, дубовая голова, садовая голова, мякинная голова** (անխելք, հիմար մարդ), **a cool head** (պաղարյուն մարդ) - **a hot head** (տաքարյուն մարդ): Ինչպես նկատում ենք, վերը բերված հականիշ դարձվածքները, որոնք Ռ. Շալունցն անվանում է համանման հականիշ դարձվածքներ¹⁰, ունեն միևնույն շարահյուսական կառուցվածքը, և դրանց հականշտությունն արտահայտվում է դրանց կազմում պարունակվող հականիշ բառերով:

Հանդիպում են նաև տարանման կառուցվածք ունեցող¹¹ հականիշ դարձվածքներ: Այս դեպքում հականշային զույգի անդամները տարբերվում են երկու կամ ավելի բաղադրիչներով: Դարձվածքները կարող են տարբերվել ըստ իրենց շարահյուսական կառուցվածքի: Հականշտությունն արտահայտվում է հիշյալ դարձվածքների բոլոր բաղադրիչների ընդհանուր իմաստով, հետևաբար այս դարձվածքները համարվում են հականիշ դարձվածքներ, ինչպես օրինակ՝ **լեղին պատուվել** (սաստիկ վախենալ, սարսափել) - **գայլի սիրտ ուրել** (անվախ, աներկյուղ լինել), **голубая кровь** (ազնվական արյուն) - **черная кость** (ոչ ազնվական արյուն), **неопытная рука** (անփորձ անձ) - **глаз набит** (մեկը շատ փորձառու է):

Դիտարկվող լեզուներում կան հականիշ դարձվածքների զույգեր, որ օգտագործվում են միայն մեկ լեզվում, սակայն որոշ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող մյուս մեկ կամ երկու լեզվում, օրինակ՝ **մազը երկար, խելքը՝ կարճ, волос долог, да ум короток, long hair and short wits**

Դիտարկվող լեզուներում համարժեք դարձվածքների և նույնիսկ համարժեք իմաստային դաշտերի գոյությունը վկայում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, սակայն կան դարձվածքներ, որոնք հատուկ են միայն այս կամ այն լեզվին: Այդ

¹⁰ Շալունց Ռ., Հականիշ դարձվածքները ժամանակակից հայերենում: «Հայոց լեզուն և գրակ. դպրոցում», Ե., 1978, N2, էջ 23: Shalunts R. N., Hakanish dartsvatsqner y jamanakakits hajerenum, «Hajots lezu ev grak. dprotsum», Ե., 1978, N2, ej 23:

¹¹ Նույն տեղում:

փաստը վկայում է հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ազգային յուրահատկությունների մասին: Ինչպես նշում է Ս. Գ. Տեր-Մինասովան. «Իրականության միևնույն հատվածը տարբեր լեզվական ձևավորում է ստանում տարբեր լեզուներում, քանի որ իրականության այդ հատվածն անցնում է մարդու գիտակցության միջով և արտացոլման ընթացքում ձեռք է բերում այնպիսի յուրահատուկ գծեր, որոնք հատուկ են տվյալ ազգային գիտակցությանը, որն իր հերթին պայմանավորված է տվյալ ժողովրդի մշակույթով»¹²:

ԱՄՓՈՓՈՒՄ

Դարձվածային միավորների իմաստաբանական հարացույցը կազմվում է ընդհանուր իմաստային առանձնահատկությունների հիմքի վրա և տարբերվում՝ կախված սեմանտիկ դիֆերենցիալ հատկանիշներից: Անձի հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորները հայերենում, ռուսերենում և անգլերենում ձևավորում են տարբեր տեսակի հարացույցներ: Բաղադրիչ միավորները թույլ են տալիս միավորել դարձվածային միավորները համանունային, հոմանշային և հականշային իմաստային դաշտերի: Տարանման կառուցվածքներ ունեցող միավորներն էլ հակադրվում են միմյանց:

Բանալի բառեր - դարձվածային միավորներ, իմաստաբանական առանձնահատկություններ, համանուն, հոմանիշ, հականիշ, տարանման կառուցվածքներ:

СЕМАНТИЧЕСКИЕ ТИПЫ ФРАЗЕОЛОГИЗМОВ, ВЫРАЖАЮЩИХ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА НА АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

МАРИАНА БАДАДЯН

Семантические парадигмы фразеологизмов формируются на основах общих интегральных семантических признаков и различаются в зависимости от семантически дифференциальных признаков. Армянские, русские и английские фразеологизмы, выражающие качества человека, вступают в различные типы парадигматических отношений. Составные единицы позволяют нам объединять фразеологизмы в омонимичные, синонимичные и антони-

¹² **Тер-Минасова С.Г.**, Язык и межкультурная коммуникация, М., 2000, стр. 49. Ter-Minasova S. G., Yazik i mejkulturnaya kommunikatsiya, M., 2000, s. 49.

мичные блоки. Дифференциальные блоки являются отличительными, они сопоставляют сравниваемые единицы друг с другом.

Ключевые слова - фразеологизмы, семантические признаки, омонимы, синонимы, антонимы, дифференциальные блоки.

THE SEMANTIC TYPES OF PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING THE QUALITIES OF A PERSON IN THE ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH LANGUAGES

MARIANA BADADYAN

The semantic paradigm of phraseological units are formed on the bases of common integral semantic features and differ according to semantically differential features. Armenian, Russian and English phraseological units expressing the qualities of a person enter into various types of paradigmatic relations. The constitutive items of these units allow us to organize the phraseological units into homonymous, synonymous and antonymous groupings. Units having different structures are opposed to each other.

Key words - phraseological units, semantic features, homonyms, synonyms, antonyms, differential units.